

<https://doi.org/10.46991/hc.2025.22.1.294>

Linguistic and Stylistic Peculiarities of Armenian Translations of J.W.Goethe's Poetic Works

Naira Shchilvyan

<https://orcid.org/0000-0003-2121-4094>

YSU, PhD, Associate Professor

naira.shachilvyan@ysu.am

Vardush Makichyan

<https://orcid.org/0009-0009-1501-4396>

YSU, Ph.D. in Philology, Assistance

vardush.makichyan@ysu.am

Keywords: Goethe, Armenian translation,
linguistic-stylistic features,
original, Faust, poetic works.

The article studies the linguistic and linguistic-stylistic features of translations of J.W.Goethe's poetic works into Armenian. The main attention in the study is paid to the comparative analysis of linguistic features of Armenian translations of "Faust" and some famous poetic works of Goethe - on the material of translations made by P. Mikayelyan, as well as by the great Armenian poets Hovhannes Tumanyan and E. Charents. Despite the significant difference between the linguistic structures of the German and Armenian languages, their rhythmic and melodic structure, these authors managed to reach the top of the translation art. The translations under study make it possible to reveal the linguistic and stylistic features that enabled their authors to not only convey the content of these works as accurately as possible, but also to preserve the poetic spirit and artistic uniqueness of the original.

**Յ.Վ.Գյուրեթի չափածո գործերի հայերեն թարգմանությունները և լեզվաոճական որոշ
առանձնահատկություններ**

Նաիրա Շաչիլյան

ԵՊՀ, ք.գ.թ., դոցենտ

Վարդուշ Մակիչյան

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 294-303



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 15.06.2025

Revised: 13.08.2025

Accepted: 18.09.2025

© The Author(s) 2025

ԵՊՀ, ք.գ.թ., ասիստենտ

Հիմնաբառեր՝ Գյոթե, հայերեն թարգմանություն,
բնօրինակ, լեզվառճական առանձնահատկություններ,
Ֆաուստ, չափածո ստեղծագործություններ:

Հոդվածում ուսումնասիրվում է Յ. Վ. Գյոթեի չափածո գործերի հայերեն թարգմանությունների լեզվաբանական և լեզվավորճական որոշ առանձնահատկություններ, որից կարող են եզրահանգել, որ Յ. Վ. Գյոթեի չափածո ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները վկայում են, որ, չնայած հայերեն և գերմաներեն լեզուների կառուցվածքային և տաղաչափական տարբերություններին, հայերեն թարգմանություններում պահպանվել է գերմանացի հանճարեղ գրողի բանաստեղծությունների, ինչպես նաև «Ֆաուստ» չափածո ողբերգության, տառն ու ոգին, շունչն ու հմայքը: Թե՛ մեր արհեստավարժ թարգմանիչներին [այս դեպքում՝ առաջին հերթին Պարույր Միքայելյանին], և թե՛ մեր մեծ բանաստեղծներին [Հ. Թումանյան, Ե. Չարենց] հաջողվել է փոխանցել Յ. Վ. Գյոթեի չափածո գործերի փիլիսոփայական խորությունը, հոգեբանական և գգացմունքային նրբերանգները և բանաստեղծական խոսքի կատարելիությունը: Նրանց բոլորին հաջողվել է հասնել գլխավոր նպատակին. այն է՝ թարգմանված գեղարվեստական տեքստը և՛ իր իմաստային ճիշտ համապատասխանությամբ, և՛ իր լեզվավորճական հմայքի համարժեքությամբ ընթերցողի մոտ առաջացնի նույն արձագանքը, ինչ բնօրինակը ընթերցողի մոտ, այսինքն՝ լիարժեքորեն կատարի իր գեղագիտական գործառնությունը: Այս ամենը միշտ բնորոշ է եղել հայ թարգմանչաց արվեստին, և նորագույն ժամանակի թարգմանությունները վկայում են այդ ավանդույթների շարունակականության մասին:

Лингво-стилистические особенности армянских переводов поэтических произведений Й. В.

Гёте

Наира Шачилвян

ЕГУ, к.ф.н., доцент

Вардуш Макичян

ЕГУ, к. ф.н., ассистент

Ключевые слова: Гёте, армянский перевод, оригинал,
лингво-стилистические особенности,
поэтические произведения.

В статье исследуются лингвистические и лингво-стилистические особенности переводов поэтических произведений Й.В.Гёте на армянский язык. Основное внимание в исследовании обращено на сравнительный анализ лингвистических особенностей армянских переводов “Фауста” и некоторых известных поэтических произведений Гёте – на материале переводов, сделанных

Յ.Վ.Գյոթեի չափածո գործերի հայերեն թարգմանությունները և լեզվաոճական որոշ առանձնահատկություններ

П.Микаеляном, а также великими армянскими поэтами Ов.Туманяном и Е.Чаренцом. Несмотря на существенную разницу между языковыми структурами немецкого и армянского языков, их ритмико-мелодическим строем, названным авторам удалось достичь вершин переводческого искусства. Исследуемые переводы дают возможность выявить те лингво-стилистические особенности, благодаря которым их авторы смогли не только максимально точно передать содержание этих произведений, но и сохранить поэтический дух и художественную неповторимость оригинала.

Ներածություն: Յ. Վ. Գյոթեն 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի գերմանական գրականության հանճարեղ գրողներից է: Նա գերմանական դասական գրականության ամենահայտնի, ամենաբարդ ու ազդեցիկ գրողներից մեկն է ով ունի կարևոր ազդեցություն ոչ միայն գերմանական՝ այլ նաև համաշխարհային գրականության զարգացման վրա: Հոգևածու անդրադարձել ենք Գյոթեի չափածո գործերից «Ֆաուստ», «Վարդը», «Լերաց շարքեր» ստեղծագործությունների հայերեն թարգմանություններին և լեզվաոճական որոշ առանձնահատկություններին:

Հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանն առաջինն էր, ով հայերեն թարգմանեց Գյոթեի բանաստեղծություններից [«Էրլբյունիգ» «Անտառի արքան»], քանզի նա գերմանացի հանճարեղ գրողի ու մտածողի կյանքի ու ստեղծագործության լավագույն գիտակներից էր:

Գյոթեի ստեղծագործությունները թարգմանելիս հաշվի են առնվել հայերեն լեզվի առանձնահատկություններն ու թարգմանիչների ստեղծագործական մոտեցումները:

Նրա չափածո գործերի հայերեն թարգմանությունները փոխանցում են մշակութային երկխոսություն, որտեղ լեզվաոճի յուրահատկությունները, գեղարվեստական ընտրություններն ու փիլիսոփայական խորությունը համադրվում են հայ գրականության ավանդույթների, լեզվամտածողության առանձնահատկությունների հետ՝ հանդիսանալով կամուրջ երկու մշակույթների միջև:

Յոհան Վոլֆգանգ ֆոն Գյոթեն հայտի է գրական աշխարհին ոչ միայն որպես մեծ գրող, այլև որպես մեծ լեզվագետ և գրականության տեսաբան, ով մեծ կարևորություն էր տալիս թարգմանչական արվեստին: Յ.Վ.Գյոթեն կատարել է Վ. Շեքսպիրի բազմաթիվ ստեղծագործությունների, ինչպես նաև տարբեր ազգերի բանահյուսական գործերի թարգմանություններ: Թարգմանության յուրաքանչյուր բառ, ըստ գերմանացի գրողի, պետք է ձգտի առավելագույն ճշմարտացիության: Այդ միտքը գրողն արտահայտում է Ֆաուստի՝ համանուն ողբերգության մենախոսություններց մեկում.

Կշռադատիր քո թարգմանած տողն աջաջին [1]:

Գրական ստեղծագործության հզոր ուժը, մարդկային գիտակցության վրա դրա ազդեցությունը, տարածվում է նաև թարգմանության միջոցով: Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» նամակագրական վեպը, լույս տեսնելուց անմիջապես հետո, թարգմանվեց եվրոպական մի շարք լեզուներով: Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում վեպը Գերմանիայում առաջացրեց երիտասարդների ինքնասպանության այնպիսի մեծ ալիք, որ իշխանությունները որոշեցին ոչ միայն արգելել գրքի նոր տպագրություններն, այլև պահանջել,

որպեսզի Յ.Վ.Գյոթեն գրի «Հակավերքեր» վերնագրով գործ, որը «կչեզոքացներ» բնօրինակ տարբերակի «կործանարար» ազդեցությունը: Բայց խնդիրը նաև այն էր, որ նույն այդ ալիքը բարձրացավ բոլոր այն եվրոպական երկրներում, որտեղ այդ գիրքը թարգմանվեց:

Գրականության խոշորագույն ստեղծագործությունները աշխարհում թարգմանաբար գոյություն ունեն բազմաթիվ տարբերակներով, այդ թվում նաև միևնույն լեզվի մեջ, ինչպես, օրինակ՝ Վ. Շեքսպիրի գործերի արևմտահայերեն և արևելահայերեն թարգմանությունները: Յ.Վ. Գյոթեի «Ֆաուստի» դեպքում դա ոչ միայն արևմտահայերեն և արևելահայերեն թարգմանություններ են, այլև դրանց չափածո նարձակ տարբերակներ: Միանգամայն օրինաչափ է, որ այնպիսի մեծություններին, ինչպիսիք են Շեքսպիրը և Գյոթեն, յուրաքանչյուր սերունդ բացահայտում է նորովի՝ իր աչքերով: Սա է պատճառը, որ ամեն նոր սերունդ ձգտում է տալ այդ հանճարների ստեղծագործությունների սեփական թարգմանությունը: Գեղարվեստական թարգմանությունների վերաբերյալ ինքը՝ Յ.Վ. Գյոթեն, նշում էր, որ յուրաքանչյուր թարգմանության ետևում կանգնած է անհատը՝ իր ուրույն աշխարհընկալմամբ, իր գրական և գեղագիտական հայացքներով, լեզվի և ոճի առանձնահատկություններով [2]:

Հայտնի է, որ չափածո թարգմանություն ցանկալի է կատարի պոետը, քանի որ թարգմանչական ունակություններից զատ այս դեպքում անհրաժեշտ է պոետական մտածողությունն ու պոետական ոգին: Մեզ հայտնի է, օրինակ, որ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը բավականաչափ չի տիրապետել գերմաներենին՝ Յ.Վ.Գյոթեի պես հանճարի գլուխգործոցները թարգմանելու համար: Սակայն, Թումանյանի կատարած թարգմանություններից յուրաքանչյուրի համար լիովին կիրառելի են Յ.Վ.Գյոթեի հետևյալ բառերը. «Ամեն մի բանաստեղծություն պետք է լինի մի ինքնատիպ և անկրկնելի ադամանդ, այլապես ընդհանրապես չարժե գրել»[3]:

Պոետ- թարգմանիչը անհամեմատ ավելի շուտ և ավելի ճիշտ է գտնում թարգմանվող չափածո ստեղծագործության տաղաչափական և մեղեդիական համարժեքները, ավելի լավ է զգում յուրաքանչյուր բառի կշիռն ու արժեքը, ինչը օգնում է նրան առավել դիպուկ և արտահայտիչ կերպով թարգմանել բնագրում արտահայտած միտքը: Գեղարվեստական տեքստը, հատկապես չափածոն, ինչպես հայտնի է, իր «իրականությունը» ստեղծում է լեզվի հատուկ միջոցների և հնարների շնորհիվ և դրանով է, թերևս, բացատրվում այն փաստը, որ գրականստեղծագործության գաջողությունը պայմանավորված է ոչ միայն և, երբեմն որ այնքան, նրա բովանդակությամբ՝ որքան նրա լեզվով: Հեղինակն ինքն է ստեղծում իր տեքստի լեզվական «հանդերձանքը», իսկ թարգմանչի մեծագույն արվեստն է գտնել այդ «հանդերձանքի» ոչ միայն իմաստային, այլև լեզվական ճիշտ համարժեքը, որն ըստ արժանվույն կներկայացնի թարգմանվող տեքստի անկրկնելիությունը:

«Ֆաուստ» ողբերգության առաջին մասում Յ.Վ. Գյոթեն ընդգծում է այն միտքը, որ բառին անհրաժեշտ է մոտենալ մեծագույն հարգանքով.

Դուք հավատով պետք է խոսեք բառի մասին,

Չի կարելի նույնիսկ դիպչել բառի մազին [*«Ֆաուստ», էջ 106*]: 4

Թարգմանությունն է՛լ ավելի բարդ խնդիրներ է առաջացնում, երբ խոսքը չափածո դրամատիկական ստեղծագործության մասին է, որտեղ լեզվական և կառուցվածքային հարցերին ավելանում են նաև «բեմական խոսքի» առանձնահատկությունները: Այս երկու ժանրերի՝ պոեզիայի և դրամատուրգիայի, միաձուլման հետ կապված բարդություններին Յ. Վ. Գյոթեն

Յ.Վ.Գյոթեի չափածո գործերի հայերեն թարգմանությունները և լեզվառճական որոշ առանձնահատկություններ

հանգամանալիորեն անդրադառնում է՝ խոսելով Ավգուստ Վիլհելմ Շլեգելի և Լյուդվիգ Թիկի կատարած թարգմանությունների մասին: Երկու այս հեղինակներն էլ ունեին թե՛ բանաստեղծական և թե՛ դրամատուրգիական ստեղծագործության սեփական փորձը: Յ.Վ. Գյոթեի տեսական դրույթները շատ մեծ ազդեցություն գործեցին Լ. Թիկի և Ա. Վ. Շլեգելի թարգմանչական գործունեության վրա: Նրանք խոստովանում են, որ իրենց «մեծագույն ուսուցիչը» [Յ.Վ. Գյոթեն – Վ.Մ] թարգմանության հարցում անչափ բծախնդիր էր և պահանջկոտ: Հարկ եղած դեպքում նա, ըստ Լ.Թիկի, չէր զլանում մանրակրկիտ քննարկել ցանկացած դետալ՝ համոզված լինելով, որ այս գործում չկա ոչ մի «մանր» կամ «երկրորդական» բան [5]:

Յ.Վ. Գյոթեն նաև պրակտիկ մասնակցություն էր ունենում այս երկու գրողների թարգմանչական գործունեության մեջ, ինչը վկայում է, որ գրողի ներդրումը բուն գեղարվեստական թարգմանության բնագավառում պակաս կարևոր չի եղել, քան նրա տեսական գործերը: Յ.Վ. Գյոթեն, ինչպես և մեր հայ մեծերը հրաշալի գիտակցում էին, որ համաշխարհային գրականության բարձրագույն գործերի թարգմանությունը ոչ միայն հարստացնում և հաճախ նոր թափ է հաղորդում քո սեփական ազգային գրականության զարգացմանը, այլև կամրջում է երկու մշակույթներ, ամրացնում եղածը կամ ստեղծում նոր մշակութային կապեր ազգերի միջև: Այս հարցի կարևորությունը, սակայն, իր հերթին նոր խնդիրներ է առաջացնում թարգմանչի համար. որքանով է թվյալ մշակութային միջավայրի այս կամ այն լեզվական միավորը համաձայնում քո լեզվի նույնիմաստ լեզվական միավորին՝ իր կշիռով, իր կիրառման համարժեքությամբ, տվյալ համատեքստի իր համապատասխանությամբ: Թարգմանիչը փաստորեն, պարտավոր է այլազգի լեզվակրին հավասար իմանալ ոչ միայն տվյալ լեզվի իմաստային շերտերն ու երանգավորումները, այլև այդ ազգի հասարակական և մշակութային արժեհամակարգը, որն արտացոլված է նրա լեզվի մեջ:

Այսպես, Յ. Վ. Գյոթեն երբեմն իմաստային առումով հավասարության նշան է դնում աստվածայինի և պանթեիզմի [բնապաշտպանության] միջև: Ֆաուստը ցանկություն է հայտնում ոչ միայն ճանաչել աշխարհն ու բնությունը, այլև միաձուլվել բնության հետ, քանի որ, ըստ Յ.Վ. Գյոթեի, յուրաքանչյուր մարդու մեջ ապրում է բնության ոգին, և կյանքի բարձրագույն ձևին մարդը հասնում է միայն այն ժամանակ, երբ նրա ոգին միաձուլվում է բնության հետ: Գերմանացի գրողի ստեղծագործության և փիլիսոփայության մեջ բնությունն ահռելի դեր է խաղում: Բանաստեղծն այն համարում է Աստծո մեծագույն արարումներից մեկը և մշտապես առանձնահատուկ տեղ է հատկացնում դրան:

Այն հանգամանքը, որ Յ. Վ. Գյոթեի համար կարևոր է ոչ միայն ամեն մի բառ, այլ հաճախ նաև բառի «իմաստային երանգավորումը», իր պտկերավոր արտահայտությունն է գտնում այն դրվագում, երբ Ֆաուստն իր աշխատասենյակում զբաղված է մոգությամբ և այդ պահին առեղծվածային ձևով հայտնվում է Մեֆիստոֆելը՝ «թափառաշրջիկ ուսանողի զգեստով»: Ֆաուստը փորձում է պարզել նրա ով և ինչ լինելը, ինչին Մաեֆիստոֆելը պատասխանում է, որ «Հարցը մանր է մի մարդու համար, ով էությունն է լոկ իրերի փնտրում համար»: [էջ 71] [6]:

Գերմաներեն բնօրինակում Մեֆիստոֆելը մանր է համարում Ֆաուստի հարցը, թե ինչ է իր անունը [Wie nennst du dich], քանի որ գտնում է, որ կարևորը ոչ թե անձի անունն է, այլ ով լինելը,

էությունը: Թարգմանիչը ըմբռնում է այդ շեշտադրումը և հենց այդ պատճառով հայերեն տարբերակում տեսնում ենք, որ Ֆաուստը հարցում է ոչ թե նրա անունը, այլ ուղղակիորեն նրա ով լինելը: Եթե բնագրում Ֆաուստը իսկապես նաման հարց տար, ապա Մեֆիստոֆելը չէր համարի այն «մանր»: Դա ավելի ակնհայտ է դառնում Ֆաուստի հաջորդ ծոսքերից.

Bei euch, ihr Herrn, kann man das Wesen

Gewöhnlich aus dem Namen lesen. [7]

Ոչ, պարոնայք. ձեր էությունն իրականում

Անունեից են իմանում: [էջ 71] [8].

Մեկ այլ տեսարանում՝ «Վիուկի խոհանոցը» անվանվող մասում, որտեղ «Վիուկի խոհանոց»-ում տեղի է ունենում Ֆաուստի կախարդական երիտասարդացումը, ինչը դառնում է Մարգարիտայի հետ նրա հանդիպման և հետագա իրադարձությունների զարգացման անհրաժեշտ պայմանը, հերոսի կողմից կասկածի տակ է դրվում այդ հնարավորությունը:

Und schafft die Sudelköcherei

Wohl dreißig Jahre mir vom Leibe?

Խզբզոցով մի թե հրաշք կկատարվի.

Կթոթափի՝ արդյոք երեք տասնյակ տարի: [էջ 135] [9].

Իմաստային առումով այս երկտողի թարգմանությունը ճշգրտորեն է փոխանցում բնագրում հնչող Ֆաուստի տարակուսանքը, սակայն հիմնական շեշտը պատրաստվող կախարդական խմիչքից տեղափոխված է վիուկի գործողությունների և դրանց ուղեկցող խոսքերի վրա: Գերմաներեն «Sudelköcherei» բառը հայերեն թարգմանությամբ նշանակում է կեղտոտ, պիղծ եփուկ: Գործողությունը ծավալվում է մոայլ խրճիթում, որը լի է առեղծվածային մանրամասներով՝ կաթսա, որը եռում է խմորմամբ, ֆանտաստիկ արարածներ, անմաքուր ուժեր: Այս վայրը արտացոլում է կատարվողի բնույթը՝ խառնվելով գրոտեսկի և սիմվոլիզմի հետ: Վիուկը, թեև գործում է Մեֆիստոֆելի հրահանգով, ինքնին մնում է կատակերգական կերպար, որի խոսքերը լի են հղումներով՝ մարդկային մոլորությունների անհեթեթությամբ:

Եվ հենց դա է հերոսի զարմանքի պատճառը, որ խոստացած երիտասարդացումը պետք է կատարվի նման «կենսանյութի» միջոցով: Եվ դա մեծ հստությամբ է փոխանցում հայ թարգմանիչը: Եթե վերջինս թարգմանության մեջ գործածեր բառի բուն՝ «բառարանային» թարգմանությունը, ապա գերմանացի հեղինակի լեզվավորձական հնարը ոչ միայն հոդս կցնդեր, այլև հայ ընթերցողի համար այդ հատվածը կմնար աղճատված և անըմբռնելի:

Վիուկի խոհանոցը՝ որպես խորհրդանիշ, ներկայացնում է ալքիմիական և կախարդական որոնումները՝ անմահության և երիտասարդության համար, բայց միևնույն ժամանակ դա սատիրա է մարդու մարմնական նորացման ձգտման վրա՝ առանց հոգևոր զարգացման: Ֆաուստը հույս ունի, որ խմորումը կվերադարձնի իր երիտասարդությունը, սակայն գործընթացը ընդամենը պատրանք է. նրա ներքին ճգնաժամը մնում է չլուծված:

Խմորումը, որը խմում է Ֆաուստը, արտացոլում է մարդկության երազանքը՝ հավերժ երիտասարդության և գեղեցկության մասին: Սակայն Գյոթեն ընդգծում է, որ այսպիսի արհեստական երիտասարդացումը չի կարող վերացնել կյանքի խորքային անբավարարվածությունը: Երիտասարդությունը՝ առանց գոյության իմաստի ըմբռնման, ընդամենը ժամանակավոր դիմակ է:

Յ.Վ.Գյոթեի չափածո գործերի հայերեն թարգմանությունները և լեզվաոճական որոշ առանձնահատկություններ

Նման իմաստային շեշտադրություններ հանդիպում ենք ոչ միայն «Ֆաուստ» ողբերգության հայերեն թարգմանության մեջ, այլ դրանք կարելի է գտնել նաև Յ.Վ. Գյոթեի բանաստեղծությունների հայերեն թարգմանություններում: Ամենավաղ օրինակներից մեկը Յ.Վ.Գյոթեի «Դաշտի վարդը» բանաստեղծության թումանյանական թարգմանությունն է: Հովհաննես Թումանյանի մոտ այս ստեղծագործությունը թարգմանված է «Վարդը» վերնագրով:

Ինչպես և Ա. Պուշկինի «Ձմեռային իրիկունը» բանաստեղծությունը, այս մեկը նույնպես այնքան հանճարեղ է թարգմանվել հայերեն, որ դարձել է ոչ միայն հայ թարգմանչաց արվեստի գոհարներից մեկը, այլև մեր հազարյակի գանձարանի անբաժանելի մասը: Հետագայում «Վարդը» բանաստեղծության հայերեն թարգմանությունը դարձել է երգ և կարևոր տեղ գրավել նաև մեր երգարվեստում:

Այս ամենը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ յուրաքանչյուր ազգի լեզուն անխզելիորեն կապված է սեփական մշակույթի հետ և այդ պատճառով գրական ստեղծագործության լեզուն՝ գեղարվեստական տեքստի տեքստով, փոխանցվում է մշակույթի հետ միասին: Յ.Վ. Գյոթեի «Դաշտի վարդը» բանաստեղծությունը բաղկացած է երեք տնից:

Դրանցից յուրաքանչյուրը Յ.Վ.Գյոթեի բնագրում ունի յոթ տող, իսկ Հ. Թումանյանի թարգմանության մեջ՝ վեց: Գերմաներեն բնագրում առաջին քառատողի և կրկներգի դեր խաղացող վերջին երկտողի միջև կա ևս մեկ տող, որը որոշակի առումով «ամփոփում է» այդ քառատողի իմաստը, մինչդեռ հայերեն թարգմանության մեջ այդ տողը բացակայում է:

*Knabe sprach: Ich breche dich,
Röslein auf der Heiden! Röslein sprach:
Ich steche dich Daß du ewig denkst an mich,
Und ich will 's nicht leiden. [10]:*

*Տղան ասավ. – քեզ կպոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին:
Վարդը ասավ. - տե՛ս, կըծակեմ,
Որ չըմոռնաս փրշոտ վարդին. [11]*

Գերմաներեն բնագրում ամեն տան առաջին քառատողին հետևում է մեկ տող, որը ամփոփիչ գործառույթ է վերցնում իր վրա, և նոր, դրանից հետո, յուրաքանչյուր բանաստեղծական տուն ավարտվում է երկու տողերով, որոնք կրկներգի դեր են խաղում:

1-ին տուն	Sah 's mit vielen Freuden. Մեծ ուրախությամբ նայեց նրան
2-րդ տուն	Und ich will 's nicht leiden. Ես չեմ ուզում այդ վիշտը տանել
3-րդ տուն	Mußt es eben leiden. Ստիպված էր լռելյայն տառապել

Անհրաժեշտ է նշել, որ Յ.Վ.Գյոթեն ավարտում է բոլոր երեք բանաստեղծական տները մեկ և նույն «կրկներգ»-երկտողով:

*Röslein, Röslein, Röslein rot
Röslein auf der Heiden.*

[Հայերեն տողացի թարգմանությունը. Վարդիկ, վարդիկ, վարդիկ կարմիր,
Վարդիկ դաշտի միջին:]

Բայց հայերեն թարգմանության մեջ բոլոր երեք բանաստեղծական տների վերջին երկտողերը տարբեր են: Հ. Թումանյանը, բաց թողնելով ամեն տան մեջ քառատողին հետևող ամփոփիչ հինգերորդ տողը, իմաստային առումով հրաշալիորեն շեշտափոխում է յուրաքանչյուր քառատողի վերջին տողի առանցքային մակդիրը, մյուս կողմից՝ որպես «կրկներտի» առաջին բառ, գործածելով հենց այդ նույն փոխված մակդիրը.

- 1-ին տուն. Մոտիկ վազեց **սիրուն** վարդին.
Միրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:
- 2-րդ տուն. Որ չըմոռնաս **փըշոտ** վարդին,
Փշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:
- 3-րդ տուն. Բայց էլ չօգնեց **քընքուշ** վարդին.
Քընքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Այսպիսով, նա «բաշխեց» բնագրի երեք տներից յուրաքանչյուրի հինգերորդ տողի իմաստային «լիցքը» նախորդող և հաջորդող տողերի միջև, ինչը հայերեն թարգմանությանը հաղորդեց ավելի մեծ խտություն և հնչեղություն:

Նույնը Հ. Թումանյանին հաջողվել է անել Յ.Վ. Գյոթեի «Ճամփորդի գիշերային երգը» [Wanderers Nachtlied՝] բանաստեղծության թարգմանության մեջ հայ բանաստեղծը զգալի խորությամբ փոխանցել Յ.Վ. Գյոթեի փիլիսոփայական միտքը:

Փոփոխությունները աչքի են ընկնում գերմաներեն բնօրինակի արդեն իսկ առաջին երկու տողերի թարգմանություններում.

Über allen Gipfeln

Ist Ruh [...]

[Հայերեն բառացի թարգմանությունը հնչում է այսպես. Բոլոր գագաթների վրա անդորր է]:

Հ. Թումանյանը թարգմանել է այսպես.

Լերաց շարքեր

Նիրհում են մըթնում [...] [9].

Այսինքն, «անդորր է» բառի փոխարեն Հ. Թումանյանը ավելի համահունչ է գտել «նիրհել» բառը, քանի որ գերմանացի գրողը բանաստեղծության վերնագիր մեջ նշելով «գրշերային» բառը, այնուհետև նկարագրում է օրվա ավարտին քուն մտնող բնությունը: Դրանով է բացատրվում ոչ միայն «նիրհել», այլև «մըթնում» բառի գործածումը հայ բանաստեղծի թարգմանության մեջ:

«Չի լսվում այլևս ծառերի կատարների սոսափյունը» բնօրինակում, Հ. Թումանյանը թարգմանել է «Չի շարժվում քամի» նախադասությամբ, ցույց տալու համար, որ բնությունը ասես անշարժացել է, ամբողջությամբ «քուն է մտել»:

Յ.Վ. Գյոթեի այս բանաստեղծությունը թարգմանել է նաև Եղիշե Չարենցը: Նրա հայերեն թարգմանության ութ տողերի մեջ երկու անգամ հանդիպում ենք «քնել» և մեկ անգամ «ննջել» բառին, մինչդեռ Յ.Վ. Գյոթեն բնօրինակի մեջ բուն «քնել» կամ «ննջել» բառ ընդհանրապես չկա:

Յ.Վ.Գյոթեի չափածո գործերի հայերեն թարգմանությունները և լեզվաոճական որոշ առանձնահատկություններ

Սակայն, ինչպես և Հ. Թումանյանի թարգմանության դեպքում, Ե.Չարենցը նույնպես ելնում է բանաստեղծության գերմաներեն բնօրինակի վերնագրի մեջ տեղ գտած «գիշերային» բառից և դրանից բխող բնության ընդհանուր պատկերից: Ե.Չարենցը կիրառում է նշված բառերը այն տեղերում, որտեղ դրանք համահունչ են հայերեն համատեքստին.

Գազաթները ննջում են

Անդորր

Լռություն է քո շուրջը

Խոր: [10]:

Յ.Վ. Գյոթեի բանաստեղծության ութ տողերը այնպես են դասակարգված գերմաներեն բնօրինակում, որ հնչերանգի առումով առաջին երկտողին հետևում են երկու եռատող: Հ. Թումանյանի մոտ հնչերանգները «բաշտված են» չորս երկտողերով, որոնք ավելի ռիթմիկ և մեղեդային են դարձնում բանաստեղծության հայերեն թարգմանությունը:

Մինչդեռ Ե.Չարենցը նախընտրել է ավելի հավասարիմ մնալ գերմաներեն բնագրի հնչերանգային կառուցվածքին: Դա առավել ակնհայտ է բանաստեղծության վերջին չորս տողերի թարգմանության մեջ.

Kaum einen Hauch;

Die Vögelein schweigenim Walde.

Warte nur, balde Ruhest du auch.

[Թռչունները անտառում, հանդում

Քնել են պարուրված մութով.

Սպասի՛ր մի փոքր՝ շուտով

Կքնես և դու:] [11]:

Ինչպես Յ.Վ.Գյոթեի մոտ, այնպես էլ Ե.Չարենցի թարգմանության մեջ, վերջին եռատողին նախորդող տողը թե՛ հնչերանգի և թե՛ իմաստային առումով կտրված է հաջորդող եռատողից, սակայն հանգավորվում է դրա վերջին տողի հետ՝ յուրօրինակ մեղեդայնություն հաղորդելով բանաստեղծության վերջնամասին: Ինչպես Յ.Վ.Գյոթեի բնօրինակը, այնպես էլ հայ երկու հանճարների թարգմանությունները վկայում են այն մասին, որ գեղարվեստական լեզուն նրանց բնական տարրերքն է, և այդ ոլորտում նրանց համար անհնարին ոչինչ չկա: Դա ամեննին զարմանալի չէ, քանի որ նրանք բոլորը՝ յուրաքանչյուրն իր երկրում և իր դարաշրջանում, «լեզվաստեղծ» գրողներ են եղել: Նրանցից յուրաքանչյուրը թղթադրել է իր ժամանակի և իր ազգի լեզվական «նորաձևությունը»:

Եզրակացություն: Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Գյոթեի չափածո գործերի հայերեն թարգմանությունները ոչ թե բառերի փոխադրումներ են, այլ մշակութային երկխոսություն է, որտեղ լեզվաոճական առանձնահատկությունները, գեղարվեստական մոտեցումներն ու փիլիսոփայական խորությունը միատեղվում են հայ գրականության ավանդույթների և լեզվաոճական առանձնահատկությունների հետ: Գյոթեի բանաստեղծությունները թարգմանելիս շատ կարևոր է, որ թարգմանողը կարողանա փոխանցել գաղափարների բարդությունը՝ համադրվելով այն հայ գրականության ավանդույթների հետ: Ամեն

մի թարգմանիչ ինքն է որոշում, թե բնագրի որ կողմը պահպանի՝ ձևակերպումը, ուժը, փոխաբերությունը, թե՛ փիլիսոփայական խորությունը: Թարգմանիչը պետք է կարողանա պահպանել բառային թարգմանության և գրական ազատության միջև հավասարակշռությունը, կարողանա պահպանել բանաստեղծական արդյունը:

Հայ թարգմանիչները մեծ պատասխանատվությամբ են մոտեցել Գյոթեի չափածո գործերի թարգմանությանը: Խնամքով պահպանել են ստեղծագործությունների երաժշտականությունն ու քնարականությունը, ինչը պահանջում է նրբություն և ստեղծագործական ազատություն:

Մեծ ավանդ ունեն հայ թարգմանիչները Գյոթեի ստեղծագործությունները հայ ընթերցողին մատչելի դարձնելու տեսանկյունից, ինչպես նաև հայ գրականության մեջ համաշխարհային գրականության ներթափանցման և ընդգրկման գործում:

Գրականության ցանկ

Goethe J. W., "Faust", Part I, Yerevan, 1963 [trans. P. Mikaelyan] p. 67.

Goethe W., Weimar Lyre. Poems. "Soviet Writer" Publishing House, Yerevan, 1985, p. 18.

Tumanyan H., Selected Works, "The Rose", Volume 1, "Soviet Writer", Yerevan 1985, p. 139.

Tumanyan H., Selected Works, "Lerats Serar", Volume 1, "Soviet Writer", Yerevan, 1985, p. 143.

Goethe J. W. Faust. München, Verlag C.H. Beck, 1994, S.47

Goethe J. W. Ein Lesebuch für unsere Zeit, Berlin und Weimar, AufbauVerlag, 1976, S.5.

Sigal N. A., YAzyk i stil' molodigo Gete, Uchenyye zapisi Leningradskogo univesiteta, 1958, str. 157.